2020

2020-2021 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ

2020-2021 ՄՐՑԱՇՐՋԱՆԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՖՈՒՏԲՈԼԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՅԼԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԻ ԿՈՂՄԻՑ (11.08.2020)

Հոդված 1: Ներածություն

Սույն ուղեցույցը սահմանում է COVID-19 կորոնավիրուսային համաճարակի պայմաններում 2020-2021 մրցաշրջանի պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների շրջանակներում մարզումային պրոցեսի և խաղերի անցկացման հիմնական նորմերը: Թիմերի, ֆուտբոլիստների, պաշտոնյաների կողմից սույն ուղեցույցի պահանջների խախտման դեպքում նախատեսվում է պատասխանատվություն՝ համաձայն ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի համապատասխան դրույթների:

Ուղեցույցի իրականացման հիմնական դրույթներն են՝

- ֆուտբոլիստների, անձնակազմի, մրցավարների պարբերաբար թեստավորումը
- ակումբների պատասխանատվությունը ֆուտբոլիստների և աշխատակիցների առողջության պահպանման համար
- մարզումներից և խաղերից առաջ, ընթացքում և հետո պատշաճ վարվեցողության պարբերաբար հրահանգավորումը
- ուժեղացված հակահիգիենիկ միջոցառումները
- սրահների, պարագաների, սարքավորումների մաքրման և ախտահանման միջոցառումները
- սոցիալական հեռավորության պահպանումը:

Հոդված 2: Կորոնավիրուսի փոխանցման ճանապարհները

Ինչպես և բոլոր կորոնավիրուսները, նոր ախտածինը, հավանաբար, առաջին անգամ մարդուն փոխանցվել է կենդանիներից: Գիտնականների կարծիքով, նոր կորոնավիրուսի աղբյուր կարող են հանդիսանալ չղջիկները և վերջիններիս արտաթորանքը: Անցյալ տարիներին հաստատվել է, որ կորոնավիրուսները մարդկանց կարող են փոխանցել նաև գյուղատնտեսական կենդանիները:

Նոր վիրուսը մարդուց մարդուն կարող է փոխանցվել անմիջապես՝ կաթիլային ճանապարհով, այսինքն օրգանիզմի կողմից անջատվող խոնավության բեկորներով: Վարակիչ հիվանդությունների գերմանական միությունը եզրակացրել է, որ վարակման համար բավական է մեկ մետրից քիչ հեռավորության վրա շփումը:

Վերջնականապես հայտնի չէ, թե վիրուսն արդյոք կարող է տարածվել կղանքի միջոցով: Հստակ հայտնի է, որ այն մորից փոխանցվում է նորածնին:

Հայտնի է նաև, որ կորոնավիրուսները կարող են մնալ անշունչ առարկաների մակերևույթին, ինչպիսիք են մետաղը, ապակին կամ պլաստիկը մինչև ինն օր, եթե հատուկ կերպով չեն հեռացվում:

Վիրուսը բազմանում է կոկորդում: Երբ վարակված մարդը խոսում կամ հազում է, նա տարածում է խոնավության մանրադիտակային կաթիլներ, որոնք կարող են թռչել մինչև 1,5 մետր հեռավորության վրա: Այդ գոտում գտնվելու դեպքում վարակը հիմնականում փոխանցվում է:

Կորոնավիրուսի ինկուբացիոն շրջանը տևում է 1-14օր /միջինում 5-6օր/:

Հոդված 3: Ախտանիշները

Հիմնականում

- չոր հազ
- մարմնի ջերմության բարձրացում
- շնչառության դժվարացում
- ընդհանուր թուլություն
- մկանացավեր

Ավելի հազվադեպ ՝

- կոկորդի ցավ, գլխացավ
- համի հոտի կորուստ
- փորլուծություն
- աչքի շաղկապենու բորբոքում/կոնյուկտիվիտ/
- մաշկի ցանավորում:

Հոդված 4: Թեստավորման կազմակերպումը և արդյունքների վերլուծությունը

1. 2020-2021 մրցաշրջանի ՀՀ Բարձրագույն և Առաջին խմբերի առաջնությունների մեկնարկից 2 օր առաջ ՀՖՖ-ն մասնակից ակումբներին տրամադրում է կորոնավիրուսի հայտնաբերման Rapid (արագ) թեստեր: Ակումբները թեստավորում են մրցումներին մասնակից թիմի ամբողջ անձնակազմին (ֆուտբոլիստներ, մարզիչներ, պաշտոնյաներ և այլն), ինչպես նաև խաղերի կազմակերպմանը ներգրավված բոլոր անձանց և յուրաքանչյուր կատարված թեստավորման պատասխաններն (թե՛ բացասական, թե՛ դրական) անմիջապես ուղարկում են ՀՖՖ ՄԿԱ բաժնի (competition@ffa.am) էլեկտրոնային հասցեին:
2. Ֆուտբոլիստի և/կամ անձնակազմից որևէ մեկի Rapid թեստի դրական արդյունքի արձանագրման պարագայում, տվյալ ակումբն իր սեփական միջոցներով իրականացնում է նշված անձի/անձանց PCR թեստավորում և խաղից առնվազն 12 ժամ առաջ ՀՖՖ ներկայացնում թեստի արդյունքները:
3. PCR թեստավորման արդյունքում դրական պատասխան գրանցած անձը/անձինք մեկուսացվում են, իսկ վարակակրի/վարակակիրների հետ շփում ունեցած մնացած բոլոր անձինք՝ թեստավորվում:
4. Թիմում 1-3 ֆուտբոլիստների մոտ վարակի հայտնաբերման պարագայում (միայն PCR թեստի արդյունքներով) տվյալ ֆուտբոլիստները մեկուսացվում են, իսկ վարակակիրների հետ շփում ունեցած մնացած բոլոր անձինք (ֆուտբոլիստներ, մարզիչներ, պաշտոնյաներ)՝ թեստավորվում: Թիմի մնացած ֆուտբոլիստների մոտ թեստավորման բացասական պատասխանների դեպքում տվյալ թիմի մասնակցությամբ առաջիկա խաղը կայանում է:
5. Թիմում 3-ից ավելի ֆուտբոլիստների մոտ վարակի հայտնաբերման պարագայում (միայն PCR թեստի արդյունքներով) տվյալ թիմի մասնակցությամբ առաջիկա խաղը հետաձգվում է: ՀՖՖ Բժշկական կոմիտեն իրավասու է որոշում կայացնել տվյալ թիմի մասնակցությամբ հետագա խաղերի անցկացման վերաբերյալ: Իրավիճակից կախված՝ կարող է հետաձգվել տվյալ թիմի մասնակցությամբ առավելագույնը երկու խաղ: Եթե տվյալ թիմը չի կարողանում ապահովել վարակի հայտնաբերման օրվանից հետո մրցումների խաղացանկով նախատեսված տվյալ թիմի մասնակցությամբ երրորդ խաղի անցկացման համար Խաղի կանոններով սահմանված ֆուտբոլիստների նվազագույն քանակը, ապա վերջինիս գրանցվում է տեխնիկական պարտություն:
6. Հատուկ դեպքերը, որոնք սահմանված չեն սույն ուղեցույցով, կքննարկվեն ՀՖՖ բժշկական կոմիտեում, որն էլ առաջարկ կներկայացնի ՀՖՖ-ին:

Հոդված 5: Ֆուտբոլիստների և անձնակազմի վարվեցողության կարգը

1. Ակումբը պատասխանատու է իր ֆուտբոլիստների և պաշտոնյաների առողջության և սահմանված հակահամաճարակային միջոցառումների և վարվեցողության կարգի պահպանման վերահսկման համար:

2. Ակումբի պաշտոնյաներն ու ֆուտբոլիստները պարտավոր են՝

   2.01 խստորեն պահպանել հակահամաճարակային սահմանված միջոցառումներն ու կարգը ոչ միայն խաղերի ժամանակ, այլև խաղերից առաջ և հետո՝ առօրյա կյանքում,

   2.02 կրճատել տնից դուրս գալը և հյուրերի ընդունումը,

   2.03 խուսափել մարդկային կուտակումներից և հասարակական տրանսպորտից.

   2.04 խստորեն պահպանել անձնական հիգիենայի կանոնները /առանձին սպասք, խոզանակ, սրբիչ, սպիտակեղեն/:

Հոդված 6: Մարզումների անցկացման կարգը բազայում

1. Պարբերաբար ախտահանել բոլոր սենյակները, գույքը և սարքավորումները:
2. Նվազեցնել հավաքները փակ տարածքներում:
3. Ժողովների ժամանակ պահպանել 1-2 մետր սոցիալական հեռավորություն:
4. Հազալիս և փռշտալիս պահպանել 1-2 մետր սոցիալական հեռավորություն և փակել բերանը արմունկով:

Հոդված 7: Հյուրանոցում տեղակայվելու պայմանները

1. Ցանկալի է, որպեսզի հյուրանոցի այն հարկում կամ հարկերում, որտեղ տեղակայված է թիմը, այլ այցելուներ/անձինք չտեղակայվեն:
2. Վերելակի կոճակները անհրաժեշտ է սեղմել արմունկով:
3. Չայցելել հյուրանոցի նախասրահի բար-սրճարան, չպատվիրել որևէ ծառայություն:
4. Ֆուտբոլիստների և պաշտոնյաների՝ սենյակներում գտնվելու ժամանակահատվածում, արգելվում է սենյակների մաքրումը հյուրանոցի աշխատակիցների կողմից:
5. Պատշաճ կերպով կազմակերպել սենյակների և ընդհանուր օգտագործման տարածքների օդափոխությունը:
6. Արգելել հյուրանոցի այն աշխատակիցների հետ շփումը, որոնք գտնվում են ռիսկի խմբում (տարիք, առողջական վիճակ):

Հոդված 8: Խաղի կազմակերպումը և դաշտի տեր ակումբի պարտականությունները

1. **Մարզադաշտ**

1.01 Թիմային ավտոբուսները խաղերին մեկնելուց առաջ պետք է ախտահանվեն:

1.02 Եթե թիմերը մարզադաշտ են ժամանում ավտոբուսով, ապա ավտոբուսի մեջ ներկա ողջ անձնակազմը պետք է պատշաճ կերպով կրի դիմակ:

1.03 Հնարավորության դեպքում թիմերի մուտքը մարզադաշտի տարածք պետք է կազմակերպվի տարբեր մուտքերով:

1.04 Թիմերը պետք է ժամանեն մարզադաշտ տարբեր ժամերի: Եթե թիմերը ժամանել են մարզադաշտ միևնույն ժամին, ապա նրանցից մեկը պարտավոր է սպասել ավտոբուսում այնքան, մինչև առաջինը ժամանած թիմը ներս կմտնի:

1.05 Մուտքի մոտ պետք է իրականացվի ջերմաչափման կազմակերպում /հեռավար ջերմաչափով/: Մարմնի 37 և ավել աստիճանի ջերմության արձանագրման դեպքում տվյալ անձի մուտքը մարզադաշտ արգելվում է:

1.06 Մարզադաշտի բոլոր մուտքերի մոտ, մարզադաշտի բոլոր առանձնացված գոտիներում պետք է դրված լինեն ձեռքերի ախտահանման նյութեր (ախտահանիչներ, ալկոգելեր):

1.07 Մարզադաշտում գտնվող յուրաքանչյուր անձ խաղի ամբողջ ժամանակահատվածի ընթացքում պետք է կրի պաշտպանիչ դիմակ՝ համաձայն ՀՀ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգի: Դիմակը պետք է կրել այնպես, որ այն ամբողջովին փակի բերանն ու քիթը:

1.08 Խաղերն անցկացվում են առանց հանդիսականների: Արգելվում է հանդիսականների և ակումբների ֆան խմբավորումների ներկայությունը մարզադաշտի հարակից տարածքում, նրանց կուտակումը մեկ վայրում, ինչպես նաև մարզադաշտի հարակից տարածքում երկրպագման կազմակերպումը, այդ թվում սոցիալական հեռավորության պահպանման պարագայում:

1.09 Մարզադաշտում կարող է ներկա գտնվել առավելագույնը 150 անձ (ոստիկանության, անվտանգության և շտապ օգնության աշխատակիցների քանակը չի ներառվում վերոնշյալ թվաքանակի մեջ):

1.10 Մարզադաշտում խաղին մասնակից յուրաքանչյուր թիմից կարող է ներկա գտնվել առավելագույնը 50 անձ, այդ թվում ֆուտբոլիստները, մարզիչները, պաշտոնյաները և ակումբի վարչական և ղեկավար անձնակազմը:

1.11 Մարզադաշտում խաղին կարող են ներկա գտնվել Հայաստանի ազգային և տարբեր տարիքային, ինչպես նաև կանանց և ֆուտզալի հավաքականների մարզիչները՝ յուրաքանչյուր հավաքականից առավելագույնը երկու մարզիչ սկզբունքով:

2. Դաշտի տեր ակումբի պարտականությունները. խաղի կազմակերպում

2.01 Նախախաղային խորհրդակցությունը անցկացվում է պաշտպանիչ դիմակներով՝ պահպանելով սույն ուղեցույցով նշված սոցիալական հեռավորությունը:

2.02 Գնդակ մատակարարող երեխաների քանակը պետք է լինի 6-8 հոգի, ովքեր խաղի ամբողջ ժամանակահատվածում պետք է պատշաճ կերպով կրեն պաշտպանիչ դիմակներ և ձեռնոցներ:

2.03 Պատգարակ տեղափոխող անձնակազմը պետք է խաղի ամբողջ ժամանակահատվածում պատշաճ կերպով կրի պաշտպանիչ դիմակներ և ձեռնոցներ:

2.04 Դաշտի տեր ակումբը նախավարժանքից առաջ, խաղից անմիջապես առաջ, ընդմիջմանը և խաղից անմիջապես հետո պետք է ապահովի խաղի գնդակների, ինչպես նաև խաղի գնդակի համար նախատեսված տակդիրի ախտահանումը:

2.05 Ընդհանուր առմամբ դաշտի տեր ակումբը խաղից առաջ, ընթացքում և խաղից հետո պետք է ապահովի մարզադաշտի բոլոր այն տարածքների ախտահանումը, որտեղ առկա է ֆուտբոլիստների, պաշտոնյաների և ակումբների անձնակազմերի տեղաշարժ և անցուդարձ՝ այդ թվում հիմնական տրիբունայի՝ պատվավոր հյուրերի համար նախատեսված հատվածը և լրագրողների նստատեղերը:

3. Հավատարմագրում

3.01 Յուրաքանչյուր խաղի համար դաշտի տեր ակումբը պետք է ներդնի հավատարմագրման համակարգ և վերահսկի, որպեսզի յուրաքանչյուր անձ մարզադաշտի տարածք մուտք գործի միայն անհատական հավատարմագրի առկայության դեպքում և դա կրի խաղի ամբողջ ժամանակահատվածում:

3.02 Յուրաքանչյուր խաղի համար դաշտի տեր ակումբը պարտավոր է կազմակերպել լրագրողների հավատարմագրում, որի արդյունքում կարող է հավատարմագրվել առավելագույնը 10 լրագրող՝ ըստ դաշտի տեր ակումբի հայեցողության: Ընդ որում՝ ներկա գտնվող բոլոր լրագրողները պարտադիր պետք է պատշաճ կերպով կրեն դիմակներ:

Հոդված 9: Հանդերձարանները և տեխնիկական գոտին

1. Մարզադաշտի տարածքում գտնվող հանդերձարանները և սենյակները խաղից առաջ անհրաժեշտ է ախտահանել: Դռները պետք է բաց լինեն, երբ խաղի պաշտոնյաները և ֆուտբոլիստները գտնվում են հանդերձարաններում և սենյակներում:

2. Թիմերի և թիմերի անձնակազմերի համար նախատեսված հանդերձարաններում պետք է ապահովվի պատշաճ մակարդակի օդափոխություն և սոցիալական հեռավորության պահպանում: Ֆուտբոլիստները նվազագույնը պետք է պահեն 1 մետր սոցիալական հեռավորություն:

3. Արգելվում է ֆուտբոլիստներից և թիմի անձնակազմից բացի խաղի ամբողջ ժամանակահատվածում և խաղի ավարտից հետո այլ անձանց ներկայությունը թիմերի հանդերձարաններում, ներառյալ՝ տվյալ թիմի ղեկավար կազմը:

4. Թիմերի հանդերձարանները, մերսման սեղանները, դռները, բռնակները, հանդերձարաններից դեպի խաղադաշտ տանող ուղին, թիմերի նստարանները, տեխնիկական գոտիները (ներառյալ սոցիալական հեռավորությունն ապահովելու նպատակով տեղադրված լրացուցիչ նստարանները) պետք է ախտահանվեն խաղից առաջ և հետո: Թիմերի հանդերձարանների ախտահանումից հետո, նախքան թիմերի ժամանումը, արգելվում է այլ կողմնակի անձանց մուտքը հանդերձարան՝ բացառությամբ նախապես թեստավորված տվյալ թիմի ադմինիստրատորի:

5. Փոխարինողների նստարանին գտնվող ֆուտբոլիստներն ու մարզչական/տեխնիկական անձնակազմը, բացառությամբ թիմի գլխավոր մարզչի, խաղի ընթացքում պետք է կրեն դիմակներ և ամբողջ ժամանակահատվածում պետք է պահպանեն պատշաճ սոցիալական հեռավորություն (առնվազն 1 մետր): Պահեստայինների նստարանի՝ համապատասխան երկարություն չունենալու պարագայում, թույլատրվում է աթոռները տեղակայել նստարանի շարունակությամբ կամ մարզադաշտի ենթակառուցվածքից կախված՝ հիմնական տրիբունայի առաջին շարքերում:

6. Փոխարինված ֆուտբոլիստները հնարավորության դեպքում պահեստայինների նստարանին նստելու փոխարեն կարող են տեղափոխվել մարզադաշտի տրիբունա՝ պահպանելով սույն ուղեցույցով նախանշված սոցիալական հեռավորությունը:

7. Յուրաքանչյուր ֆուտբոլիստ պետք է ունենա ջրի և հեղուկների համար նախատեսված անհատական տարաներ:

Հոդված 10: Նախավարժանքը և խաղի մեկնարկը

1. Թիմերի ֆուտբոլիստները նախավարժանքը կատարում են միմյանցից առանձին:

2. Խաղադաշտ դուրս գալիս թիմերը պետք է միաժամանակ թունելում չգտնվեն:
3. Խաղից առաջ թիմերը չեն շարվում դեմքով դեպի հիմնական տրիբունա, չեն ողջունում միմյանց և մրցավարներին և չեն շարվում թիմային լուսանկարի համար:

Հոդված 11: Խաղի ընթացքում փոխարինումների կարգը

1. Յուրաքանչյուր թիմի կթույլատրվի կատարել առավելագույնը 5 (հինգ) փոխարինում:
2. Խաղի ընթացքի հաճախակի ընդհատումներից խուսափելու նպատակով յուրաքանչյուր թիմ խաղի ընթացքում կունենա միայն 3 հնարավորություն (դադար)՝ փոխարինում կատարելու համար. փոխարինումները կարող են կատարվել նաև ընդմիջման ժամանակ, որը չի հաշվարկվի, որպես օգտագործված հնարավորություն:
3. Եթե երկու թիմերն էլ փոխարինում կատարեն նույն պահին, դա կհաշվարկվի որպես յուրաքանչյուր թիմի 3 հնարավորություններից մեկը:
4. Չօգտագործված փոխարինումները և փոխարինման հնարավորությունները կտեղափոխվեն ավելացված ժամանակ:
5. Եթե մրցումների կարգը թույլատրում է խաղի լրացուցիչ ժամանակում հավելյալ փոխարինում, ապա թիմերից յուրաքանչյուրը կունենա փոխարինման մեկ հավելյալ հնարավորություն: Փոխարինումներ կարող են կատարվել նաև մինչև լրացուցիչ ժամանակի մեկնարկը և լրացուցիչ ժամանակի ընդմիջման ժամանակ:

Հոդված 12: Ջրային դադարը

1. Խաղի մեկնարկից 15 րոպե առաջ +30-ից մինչև +35 աստիճան օդի ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է երկու ջրային դադար՝ մեկ րոպե տևողությամբ՝ խաղի 30-րդ և 75-րդ րոպեներին:
2. Խաղի մեկնարկից 15 րոպե առաջ +36 և բարձր ջերմաստիճանի դեպքում խաղի ժամանակ կիրառվում է մեկական րոպե տևողությամբ մինչև չորս ջրային դադար՝ խաղի 15-րդ, 30-րդ, 60-րդ և 75-րդ րոպեներին:
3. Ամեն դեպքում ջրային դադարի վերաբերյալ որոշումը կայացնում է խաղի Պատվիրակը՝ խաղի մեկնարկից 15 րոպե առաջ և խաղի ընդմիջմանը՝ օդի ջերմաստիճանի չափման արդյունքում, և անմիջապես տեղեկացնում բոլոր շահագրգիռ կողմերին:

Հոդված 13: Խաղի ամբողջ ժամանակահատվածում արգելվում են

- ➔ Ձեռքսեղմումները
- ➔ Թիմային լուսանկարը
- ➔ Գրկախառնությունները
- ➔ Դրոշների և հուշանվերների փոխանակումը

Հոդված 14: Հետխաղյա մամուլի ասուլիսը

Հետխաղյա մամուլի ասուլիսները չեղարկվում են և անցկացվում են միայն հեռավար տարբերակով: Հետխաղյա ասուլիսների առցանց կազմակերպման պատասխանատվությունը դրվում է դաշտի տեր ակումբի ԶԼՄ-ների հարցերով պատասխանատուների վրա:

Հոդված 15: Ընդհանուր դրույթներ

ՀՖՖ Պրոֆեսիոնալ ֆուտբոլի մրցումների անցկացման 2020-2021 մրցաշրջանի կանոնակարգի այն հոդվածները, որոնք նշված չեն սույն ուղեցույցում, շարունակում են մնալ պարտադիր կատարման համար: